

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-491-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 17-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝

«4. Սույն օրենքով սահմանված գույքահարկի վճարման գծով խախտումներ հայտնաբերելու դեպքում գույքահարկի գծով հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը կատարելուց հետո անցել է տաս տարի:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

‘Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին’, ‘Հարկերի մասին’ ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին,
 ‘Հողի հարկի մասին’ ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին, ‘Գույքահարկի մասին’ ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին **ՀՀ ՕՐԵՆՔԻ
 ՆԱԽԱԳԾԻ**

N	Առարկության, առաջարկության հեղինակը (առարկության, առաջարկության ստացման ամսաթիվը)	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	ՀՀԿ խմբակցություն	Սոցիալական տարբերակումը ավելի հստակեցնելու նպատակով առաջարկվել է նվազեցնել արտոնության տարածման համար նախատեսված ապառքների չափի վերին շեմերը հողամասերի ու շինությունների հարկի համար մինչև 1.0 մլն դրամ, իսկ փոխադրամիջոցների համար՝ մինչև 0.5 մլն դրամ:	Ընդունվել է, ‘Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին’ օրենքի նախագծում, 3-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:
2.	ՀՀԿ խմբակցություն	2008 թվականի հունվարի մեկից մինչև 2011 թվականի հունվարի մեկը ընկած ժամանակապատվածի համար արտոնությունները կիրառել միայն այն հարկատուների համար, ում հարկային պարտավորությունները 1996 թվականից մինչև 2012 թվականի հունվարի մեկի դրությամբ չեն գերազանցի 1.0 մլն դրամը՝ շինությունների ու հողի հարկի գծով, և 0.5 մլն դրամը՝ փոխադրամիջոցների գծով:	Ընդունվել է, ‘Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին’ օրենքի նախագծում, 3-րդ հոդվածում կատարվել է լրացում, ավելացվել են ‘Ներառյալ մինչև 2008 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածի համար)’ բառերը:

3.	ՀՀ խմբակցություն	2008 թվականի հունվարի մեկից մինչև 2011 թվականի հունվարի մեկը ընկած ժամանակապատվածի համար արտոնությունները կիրառել միայն հարկատու ֆիզիկական անձանց նկատմամբ (իրավաբանական անձանց նկատմամբ արտոնությունը չկիրառել):	Ընդունվել է, 'Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին' օրենքի նախագծում, 3-րդ, 4-րդ, 6-րդ հոդվածներում կատարվել է փոփոխություն, համապատասխան տեղերում ավելացվել է 'ֆիզիկական անձիք' բառակապակցությունը:
4.	ՀՀ կառավարություն	Հողի հարկի մասով նախատեսել ավագանու կողմից համայնքի բյուջեյի 10% շրջանակում արտոնություններ սահմանելու իրավասություն, ինչպես որ առկա է գույքահարկի պարագայում::	Ընդունվել է. 'Հողի հարկի մասին' ՀՀ օրենքի նախագծում ավելացվել է համապատասխան հոդված, նման 'Գույքահարկի մասին' ՀՀ օրենքով ամրագրված դրույթին:
5.	Հայ Յեղափոխական դաշնակցության պատգամավորական խմբակցություն	'Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին' նախագծի հոդված 2-ում առաջարկվող արտոնությունը տարածել ավելի մեծ ժամանակահատվածի վրա՝ 2008 թվականի հունվարի 1-ին բառերը փոխարինել 2012 թվականի հունվարի 1-ին բառերով, ինչպես նաև համապատասխան խմբագրում կատարել ամբողջ օրինագծում:	Չի ընդունվել. 2008 թվականի հունվարի 1-ի ժամկետը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատական պրակտիկայում հատկապես այս ժամկետից առաջ ընկած պարտավորությունների մասով դատական հայցեր չեն ընդունվում՝ վաղեմության ժամկետի հիմնավորումով: Այս հանգամանքով է

			<p>պայմանավորված հողված 2-ի անհրաժեշտությունը ու տրամաբանությունը: Հաջորդող տարիների համար արձանագրվել են բարձր հավաքագրման ցուցանիշներ, և այդ տարիների համար առկա են հարկային արդյունավետ վարչարարության օրենքով նախատեսված հնարավորություններ:</p>
6.	<p>Հայ Յեղափոխական դաշնակցության պատգամավորական խմբակցություն</p>	<p>‘Հողի հարկի մասին’ ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին, ‘Գույքահարկի մասին’ ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծերով ներկայացված <i>դաս տարի</i> բառերը փոխարինել <i>երեք տարի</i> բառերով:</p>	<p>Չի ընդունվել. Վաղեմության ժամկետի հետ կապված փոփոխություն է առաջարկվել նաև ‘Հարկերի մասին’ ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծով, մասնավորապես 30.1 հոդվածի 1-ին մասում առաջարկվող փոփոխությամբ հոդվածի դրույթները չեն տարածվի հողի հարկի և գույքահարկի վրա, որպեսզի չառաջանան հարկերը չվճարելու և հետագայում պատասխանատվությունից</p>

			խուսափելու սպասումներ ու հնարավորություններ: Այս համատեքստում է, որ վաղեմության ժամկետը մեծացվել է և հստակ սահմանվել 10 տարի: Հարկ է նշել, որ հատկապես գույքահարկի ու հողի հարկի պարագայում միջազգային պրակտիկայում ընդունված է նաև ընդհանրապես վաղեմության ժամկետ չսահմանելու պրակտիկան:
7.	Գալուստ Սահակյան ՀՀԿ	Առաջարկվել են մի շարք խմբագրական փոփոխություններ:	Ընդունվել են: